«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - **«Արտադասարանական դաստիարակությունը դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման ուղի»:**

ԱՌԱՐԿԱ	--Հայոց լեզու և գրականություն---
ՀԵՂԻՆԱԿ	------Ալվարդ Միրզոյան---------
ՄԱՐԶ	-------Արմավիր----------
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	------Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հ/դ---

Ներածություն……..……..3

Արտադասարանական դաստիարակությունը դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման ուղի…….....4

Արտադասարանական դաստիարակության մեթոդները և տեխնոլոգիաները ……11

Արտադասարանական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը …12

Եզրակացություն……13

Գրականության ցանկ…….....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ- Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Երեխային ոչ միայն գիտելիքներով զինելն է կարևոր ,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշների ձևավորումը: Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական, արժեքային համակարգի հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ կլիներ արժեքային համակարգի ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, քանի որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում:

ՆՊԱՏԱԿ.

Արտադասարանական դաստիարակության միջոցով դպրոցականների արժեքային համակարգի ձևավորում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- Ներկայացնել արժեքային համակարգի այն տարրերը, որոնք հանդես են գալիս արտադասարանական դաստիակչական աշխատանքների իրականացման միջոց:
- Բացահայտել, թե ինչն է նպաստում արտադասարանական աշխատանքների կազմակերպման արդյունավետությանը:
- Վեր հանել այն տեխնոլոգիաները և մեթոդները,որոնք իրականացվում են արտադասարանական դաստիարակչական աշխատանքներում:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻ

Ատադասարանական դաստիարակչական աշխատանքները մանկավարժների կողմից տարբեր ձևերով իրականացվող գործունեություն է , որը ապահովում է անձի սոցիալականացման համար անհրաժեշտ պայմաններ, դասից դուրս : Այն կարող են իրականացնել դասղեկները, առարկայական ուսուցիչները, խմբակների ղեկավարները և այլն:

Ուսուցումը պետք է մշտապես լրացվի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը և դպրոցականների բազմակողմանի գործունեության կազմակերպմանն ուղղված արտադասարանական աշխատանքով:Ուրեմն սովորողների հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև արտադասարանական աշխատանքների գործընթացում: Քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու արժեքային համակարգի ձևավորումը:

Արտադասարանական աշխատանքը, ինչպես մատնանշում է Մ. Մանուկյանը, այդ առումով շատ առավելություն ունի դասի համեմատությամբ: Նրա բովանդակությունը խիստ կանոնարկված չլինելով, թույլ է տալիս ավելի օպերատիվ կերպով օգտագործել սովորողների զարգացման համար գիտության, տեխնիկայի, մշակույթի և արվեստի նորագույն նվաճումները:

Արտադասարանական աշխատանքը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական և այլ կազմակերպման համար, որի ընթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջավոր ուսուցիչների որոնող ստեղծագործ միտքը զբաղված է նրանով, թե ինչպես հաղթահարել սովորողների որոշ մասի անտարբերությունն ուսման նկատմամբ, ինչպես կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները, այլև սովորի խորհել, դատել, վերլուծել և ինքնուրույն հետևություններ կատարել: Ուստի, ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե՛ ուսումնական և թե՛ արտադասարանական գործունեությունների միասնությունը: Ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ սովորողների արտադասարանական գործունեությունը պետք է առավելագույն չափով հագեցված լինի այնպիսի բազմաբնույթ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներով, որոնք սովորողներին հրահրեն գիտելիքներով գործառնելու և

որոնելու դրված նպատակի իրագործման նոր, ավելի կատարելագործված ուղիներ, որոնք զարգացնում են նրանց ոչ միայն մտածողական ակտիվությունը, այլև կամային ջանքերը:

Այսպիսով, արտադասարանական աշխատանքի արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել և ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը և նպատակասլաց կերպով զարգացնել դրանք:

Այսօր ազգային դպրոցի վերակառուցման շրջանում ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը և տարածումը մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ուստի, ուսումնասիրելով առաջավոր փորձը, հետազոտող մանկավարժը, հնարավորություն է ստանում բացահայտելու ուսուցչի գործողությունների և այդ գործողությունների արդյունքների միջև եղած օբյեկտիվ կապերը, պարզելու այն պայմանները, որոնց առկայությամբ դպրոցում դաստիարակության և ուսուցման այս կամ այն մեթոդներն ու հնարները տալիս են դրական արդյունքներ: Հիրավի, առաջավոր փորձի տակ հասկանում ենք ուսուցչի բարձր վարպետությունը, այսինքն՝ այնպիսի պրակտիկան, որը տալիս է մանկավարժական բարձր արդյունք:

Կան ուսուցիչներ, որոնք իրենց դասերը այնպես է կառուցում, որ դրանց սահմաններից դուրս են փոխադրվում սովորողների ճանաչողական գործունեության շատ ձևեր: Դասի շրջանակներից ուսումնական գործընթացի այդպիսի ելքն առավել ևս անհրաժեշտ է, քանի որ շատ աշակերտների համար ուսուցման գործընթացում ծնված ճանաչողական հետաքրքրությունը դառնում է ինքնակրթության հզոր խթան:

Հայ գրականությունից արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի (խմբակներ, էքսկուրսիաներ, Արցախյան գոյամարտին նվիրված գեղարվեստական երեկոներ, հայ գրերի ստեղծման և այլ) կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչին ապահովելու դաստիարակության և ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության այնքան կարևոր գծի զարգացումը, ինչպիսին ճանաչողական հետաքրքրությունն է:

Հաճախ օգտագործվում են մանկավարժական բազմազան մեթոդներ, հնարներ ու միջոցներ, որոնք նախապայմաններ են ստեղծում ապահովելու սովորողների ակտիվությունը, ինչպես դասապրոցեսում, այնպես էլ արտադասարանական աշխատանքների գործընթացում արժեքային համակարգի և ճանաչողական

հետաքրքրությունների ձևավորման ու զարգացման միտումով: Ուշագրավ է նաև հետել ստեղծագործորեն աշխատող ուսուցիչին, ով մշտապես վերլուծում է իր աշխատանքը և գնահատում դրա արդյունքները: Նկատելով, որ արդյունքները չեն համապատասխանում նշված նպատակին, նա փնտրում է այդ տարբերության պատճառները և հետո փորձում է այլ ձևով լուծել դրված խնդիրները, փնտրում է նոր մոտեցում, հնարներ, դիդակտիկական միջոցներ, գործնականում փորձում է դրանց արդյունավետությունը: Այսպես կարող ենք հասկանալ թե ինչպես է ընթանում ուսուցչի մանկավարժական վարպետության աստիճանական աճը, սովորողների դաստիարակության և ուսուցման նոր միջոցների ստեղծումն ու ստուգումը:

Հայ ուսուցիչների ուսուցիչ Աղայանը սովորեցնում է, որ չպետք է թույլ տալ, որ աշակերտի հետաքրքրությունը մարի, պետք է պահպանել, ուղղություն տալ, խորացնել այն հետաքրքրությունը վերլուծելով իմանալ ու պահանջել, իսկ նման պահանջ կարելի է ձևավորել միայն ուսուցիչների անմիջական ներգործության միջոցով:

Անշուշտ, ուսումնական գործընթացի արդյունավետությունը շատ բանով կախված է սովորողների ճանաչողական հետաքրքրություններից, նրանց ուսումնական գործունեության խելամտորեն պլանավորումից ու կազմակերպումից: Պետք է հաշվի առնվի սովորողների առարկայական ու ընդհանուր զարգացման մակարդակը և ծրագրային նյութը պետք է հաղորդվի այնպիսի ընդգրկմամբ ու ձևով, որ հետաքրքիր դառնա, այլ ոչ թե ձանձրույթ պատճառի աշակերտներին: Արտադասարանական դաստիրակչական աշխատանքները կազմակերպելիս ոչ միայն խորացվեն ու ամրակայվեն այդ թեմայից աշակերտներին ծանոթ հատկանիշները, այլև բացահայտվեն նրանց անծանոթ ու նոր առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, արտադասարանական աշխատանքներում ծրագրային նյութը (պատմությունից, գրականությունից, աշխարհագրությունից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից եւ այլ առարկաներից) պարզաբանելիս, վարպետ ուսուցիչները ոչ միայն հիշատակում են ծրագրում ու դասագրքում եղած հանրահայտ տեղեկությունները, այլև նյութի խորացումը ապահովելու նպատակով տարբեր սկզբնաղբյուրներից ծանոթացնում այդ գիտությունների ուղղությամբ վերջին տարիներին կատարած հետազոտությունները, այսինքն՝ սովորողներին զինում ոչ միայն ուսումնական, այլև համաուսումնական կարողություններով,

ունակություններով, ձևավորում նրանց մեծ ճանաչողական որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, հմտություններ:

Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել իրականությունը, այլև որոշակի հորություն մտցնեն իրականության մասին եղած ըմբռնումների, հասկացությունների մեջ: Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ, հոգևոր ուժերի լարում, ստացած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն և դժվարությունները հաղթահարելու մեծ կամք:

Այսպիսով արտադասարանական աշխատանքի տարածված ձևը առարկայական խմբակներն են, որը նպաստում է սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, գիտության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը: Խմբային աշխատանքների ընթացքում աշակերտները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր դնելու, դիտումներ կատարելու հմտություններ: Նրանք լայն հնարավորություն են ստեղծում սովորողների ինքնուրույն ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Ինչպես ուսուցման գործընթացում, այնպես էլ արտադասարանական գործունեության ընթացքում:

Օրինակ, կենսաբանության, բուսաբանության արտադասարանական աշխատանքերում սովորողները աճեցնում են գյուղատնտեսական բույսեր, խնամում կենդանիներ, պայքարում բույսերի վնասատուների դեմ և ուշադրություն դարձնում կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների, կյանքի օրինաչափություններին, բնության պահպանության միջոցառումներին և այլն: Դրանով կարող է դպրոցը լուծել իր առջև դրված գոյապահպանական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության խնդիրները: Նման ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ակտիվանում է աշակերտների մտածողությունը:

ՈՒսուցիչները կարող են կազմակերպել մասնայական միջոցառումներ՝ օրինակ, ցերեկույթներ ու երեկույթներ, որտեղ ցուցադրում են հետաքրքիր փորձեր, հերբարիումներ, հնագիտական հավաքածուներ, լույս են ընծայում պատի թերթեր, որոնք բազմակողմանի տեղեկություն են հաղորդում կենսաբանության պատմության նորագույն նվաճումների մասին:

Դպրոցի ուսումնադաստիարակչական համալիրում իրենց կարևորագույն տեղն են զբաղեցնում նաև արտադասարանական աշխատանքները, որոնք կարգավորում են դասից դուրս երեխայի ազատ ժամանակը: Աշխատանքի այս ձևն ավելի կազմակերպված բնույթ է ստանում, առավել արդյունավետ է դառնում

դպրոցներում: Դրանք նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների ձևավորելու, հանրակրթական կարողություններով ու հմտություններով զինելու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ,ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ ՁԵԱՎՈՐԵԼ ԱՆՁ և ՔԱՂԱՔԱՑԻ, ՈՐԸ ՊԵՏՔ Է՝

1.Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության,արվեստի,ավանդույթների,ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները,լինի հայրենասեր,կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3. Գիտակցի,որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները , կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.

4. Գիտակցի,որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

5. Կարևոր բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները,լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,հանդուրժող, խաղաղակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

11. Դրսևորի աշխատասիրություն , հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Մանկավարժական փորձը վկայում է, որ դպրոցներում թե ուսուցման, թե արտադասարանական բազմաբնույթ աշխատանքներում միշտ էլ կարևորվել է աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության հարցերը, որոնք այսօր առաջատար խնդիր են համարվում ազգային դպրոցի վերակառուցման, կրթական համակարգի նոր բարեփոխումների շրջանում: Դա անհնարին է առանց սովորողների արժեքային համարակարգի, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման և ստեղծագործական ունակությունների զարգացման:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

- Աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, ռոտացիոն եռյակներով, «երկու, չորս, միասին»
- Դասախոսություններ հիմնախնդրային շարադրանքով
- Էվրիստիկական զրույց
- Դաս-սեմինարներ (բանավեճերի, կլոր սեղան, զրույց մտքերի փոխանակության ձևաչափով)
- Կոնֆերանսներ
- Գործարար խաղեր
- Մուլտիմեդիայի միջոցների օգտագործում (համակարգչային դասարաններ)
- Լիարժեք համագործակցության տեխնոլոգիա
- Մոդելավորման տեխնոլոգիա կամ նախագծերի մեթոդ (ավելի շուտ որպես արտադասարանային գործունեություն):

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտադասարանական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը կախված է.

- Ուսուցչի մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունից ու լավատեսությունից,
- Արտադասարանական դաստիարակչական անմիջական կապը դպրոցի դաստիարակչական գործընթացի հետ
- Աշակերտների նկատմամբ նրա վստահելի վերաբերմունքից,
- Դասարանի կոլեկտիվի գործունեության տարբեր ձևերի զուգակցումից ու կազմակերպումից,
- Դպրոցականների աշխատանքի օբյեկտիվ խրախուսումից ու գնահատումից,
- Համադպրոցական ,խմբային և անհատական դաստիարկչական աշխատանքների համադրումից
- Աշակերտի գործունեության կազմակերպման ,ստեղծագործական գործունեության խթանման և դաստիարակչական աշխատանքի արդյունավետության վերահսկման համապատասխանությունից
- Նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու մշտական պատրաստությունից և այլ հանգամանքներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով եկա այն եզրահանգման, որ դպրոցի ուսումնադաստիարակչական համալիրում իրենց կարևորագույն տեղն են գրաղեցնում նաև արտադասարանական աշխատանքները, որոնք կարգավորում են դասից դուրս երեխայի ազատ ժամանակը: Աշխատանքի այս ձևն ավելի կազմակերպված բնույթ է ստանում, առավել արդյունավետ է դառնում դպրոցներում: Դրանք նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների ձևավորելու, հանրակրթական կարողություններով ու հմտություններով զինելու համար:

Արտադասարանական դաստիարակչական աշխատանքը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական և այլ կազմակերպման համար, որի ընթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները:

Մանկավարժական փորձը վկայում է, որ դպրոցներում թե ուսուցման, թե արտադասարանական բազմաբնույթ աշխատանքներում միշտ էլ կարևորվել է աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության հարցերը, որոնք այսօր առաջատար խնդիր են համարվում ազգային դպրոցի վերակառուցման, կրթական համակարգի նոր բարեփոխումների շրջանում: Դա անհնարին է առանց սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման և ստեղծագործական ունակությունների զարգացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղ. Աղայան << Խորհրդածություններ դաստիարակության վրա>> Երկերի ժողովածու
2. Մ. Մ. Մանուկյան << Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները>>
3. Գ. Ի. Շչուկինա <<Մանկավարժություն>>
4. Аужанова Н. Б. Особенности деятельности учителя во внешкольных учреждениях [Текст] / Н. Б. Аужанова // Молодой ученый.
5. https://forum.armedu.am/archive/index.php/t-1464.html
6. http://school77.schools.am/problems.html
7. https://hy.wikipedia.org/